Պատմություն և մշակույթ
History and Culture
2023 № 1(19)
https://doi.org/10.46991/hc.2023.19.1.147

Turkey: Mediator or Player in the Confrontation Between Russia and Ukraine?

Anush Hovhannisyan
https://orcid.org/0000-0001-7346-4779
Leading researcher of the Turkish Department of the Institute of Oriental Studies
of the National Academy of Sciences of the RA
anush.hov@gmail.com

Keywords: Russian-Ukrainian conflict, annexation of Crimea, Turkey, Erdogan, Turkish-Ukrainian relations, Russian-Turkish "competitive partnership", sanctions, peace mediation.

Turkey manages to be a strategic partner of Ukraine and Russia at the same time, despite the fact that these countries are in a state of actual war with each other. Turkey consistently condemns Russia's annexation of Crimea and supports future NATO membership for Ukraine. Ankara verbally condemned the Russian invasion almost immediately after February 24, but did not join any sanctions against Russia. But from the very beginning, it tried in every possible way to become the main mediator in organizing peace negotiations between Moscow and Kyiv.

Ankara takes the most advantageous position for itself, trying to benefit from someone else's conflict. At the same time, Turkey is trying to increase its political influence, acting as a mediator in the negotiations, as a "great peacemaker". Turkey positions itself as a true regional leader, and in its relations with both Russia and Ukraine, it tries to follow the ancient principle of "divide and rule." Recep Tayyip Erdogan seeks everywhere to take advantage of Russia's weaknesses and increase his influence - or rather, in the understanding of the current Turkish authorities, "to return the influence that was lost in the 19th and early 20th centuries".

Why Ankara is behaving this way and what are the personal interests of Turkish President Recep Erdogan in this war - these questions will be analyzed in this article.

Թուրքիա. միջնորդ թե՞ խաղացող Ռուսաստանի և Ուկրաինայի դիմակայությունում

Անուշ Հովհաննիսյան
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի առաջատար գիտաշխատող

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-1(19), 2023, pp. 147-162
Received: 29.01.2023
Revised: 22.02.2023
Accepted: 15.06.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

Turkey: mediator or player in the confrontation between Russia and Ukraine?

Թուրքիա. միջնորդ թե՞ խաղացող Ռուսաստանի և Ուկրաինայի դիմակայությունում

Հիմնաբառեր՝ Ռուս-ուկրաինական հակամարտություն, Ղրիմի բռնակցում, Թուրքիա, Էրդողան, թուրք-ուկրաինական հարաբերություններ, ռուս-թուրքական «մրցակցային գործընկերություն», պատժամիջոցներ, խաղաղարար միջնորդություն:

Թուրքիային հաջողվում է միաժամանակ լինել Ուկրաինայի և Ռուսաստանի ռազմավարական գործընկերը՝ չնայած այն հանգամանքին, որ այդ երկրները փաստացի պատերազմական վիճակում են գտնվում միմյանց հետ: Թուրքիան հետևողականորեն դատապարտում է Ռուսաստանի կողմից Ղրիմի բռնակցումը և աջակցում է ՆԱՏՕ-ի ապագա անդամակցությանը Ուկրաինայի համար: Անկարան բանավոր կերպով դատապարտեց ռուսական ներխուժումը փետրվարի 24-ից գրեթե անմիջապես հետո, սակայն չմիացավ Ռուսաստանի դեմ պատժամիջոցներին: Բայց հենց սկզբից նա ամեն կերպ փորձում էր դառնալ Մոսկվայի և Կիևի միջև խաղաղ բանակցությունների կազմակերպման գլխավոր միջնորդը:

Անկարան իր համար շահեկան դիրք է գրավում՝ փորձելով օգուտ ստանալ այլոց կոնֆլիկտից: Միաժամանակ Թուրքիան փորձում է մեծացնել իր քաղաքական ազդեցությունը՝ հանդես գալով բանակցություններում որպես միջնորդ, որպես մեծ «խաղաղարար»: Թուրքիան իրեն դիրքավորում է որպես իրական տարածաշրջանային առաջնորդ, և թե՛ Ռուսաստանի, թե՛ Ուկրաինայի հետ հարաբերություններում փորձում է հետևել «բաժանիր և տիրիր» հնագույն սկզբունքին: Ռեջեփ Թայիփ Էրդողանը ամենուր ձգտում է օգտվել Ռուսաստանի թույլ կողմերից և մեծացնել իր ազդեցությունը, ավելի ճիշտ՝ ներկայիս թուրքական իշխանությունների ընկալմամբ՝ «վերադարձնելու XIX դարի և XX դարի սկզբին իրենց կորցրած այդ ազդեցությունը»:

Ինչո՞ւ է Անկարան իրեն այդպես պահում, որո՞նք են Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի անձնական շահերն այս պատերազմում՝ նշված հարցերը կվերլուծվեն ներկայացվող հոդվածում:

Турция: посредник или игрок в противостоянии России и Украины?

Ануш Оганнисян

Ведущий научный сотрудник турецкого отделения Института Востоковедение Национальной академии наук РА

Ключевые слова: Российско-украинский конфликт, аннексия Крыма, Турция, Эрдоган, турецко-украинские отношения, российско-турецкое «конкурентное партнерство», санкции, миротворческое посредничество.

Турции удается быть стратегическим партнером Украины и России одновременно, несмотря на то, что эти страны находятся в состоянии фактической войны между собой. Турция последовательно осуждает аннексию Крыма Россией и поддерживает будущее членство в НАТО Украины. Анкара почти сразу после 24 февраля на словах осудила российское вторжение, однако ни к каким санкциям против России она не присоединилась. Зато всячески с самого начала старалась стать основным посредником в организации мирных переговоров Москвы и Киева.

Анкара занимает максимально выгодную для себя позицию, пытаясь зарабатывать на чужом конфликте. И одновременно Турция пытается усилить свое политическое влияние, выступая как посредник на переговорах, в роли «большого миротворца». Турция позиционирует себя как настоящий региональный лидер, и в отношениях как с Россией, так и с Украиной старается следовать древнему принципу «разделяй и властвуй». Реджеп Эрдоган везде стремится пользоваться слабостями России и повышать свое влияние – вернее, в понимании нынешних турецких властей, «возвращать это влияние, которое было ею утеряно в XIX — начале XX веков».

Почему Анкара ведет себя именно так и каковы личные интересы в этой войне турецкого президента Реджепа Эрдогана -эти вопросы будут проанализированы в данной статье.

* * *

Ներածություն: Վերջին շրջանում թուրք քաղաքական գործիչները Թուրքիան բնութագրում են որպես «բնական միջնորդ» և Թուրքիայի մասնակցությունը բարի կամքի առաքելություններին ու միջնորդությանը որակում որպես թուրքական արտաքին քաղաքականության նոր տեսլականի մաս:

Ժամանակին Ահմեդ Դավութօղլուն առաջ էր քաշում այն տեսակետը, որ Թուրքիան «կենտրոնական երկիր» է, որը պետք է ոչ միայն բազմակողմանի արտաքին քաղաքականություն վարի, այլև կարող է հանդես գալ որպես խաղաղարար և միջնորդ նույնիսկ այն միջազգային վեճերում, որոնցում ինքը չունի ուղղակի ազգային շահ [Yalçın, 2012, 195-213]: «Միջին տերությունները», ինչպիսիք են, օրինակ, Կանադան և Ավստրալիան, կարող են հանդես գալ որպես միջնորդներ՝ փորձելով ստեղծել տարածաշրջանային անվտանգություն: Նրա կարծիքով որպես միջին դիրք ունեցող տերություն աշխարհի ամենաանհանգիստ տարածաշրջանում, նույն դերը կարող է խաղալ Թուրքիան Davutoğlu, 2013, 83-90):

Եվ իսկապես, վերջին տասնամյակում Թուրքիան փորձել է հանդես գալ որպես միջնորդ Բոսնիայի, Սոմալիի, արաբա-իսրաելական հակամարտություններում, Իրանի հետ միջուկային ծրագրին վերաբերող բանակցություններում և այլն (Eralp, 2016): Թուրքիայի այդ նոր դերակատարումը տարբեր գնահատականների է արժանացել փորձագետների կողմից: Օրինակ, Սաբանջի համալսարանի դասախոս Փընար Աքփընարի կարծիքով Թուրքիան որպես միջնորդ լեգիտիմություն է ձեռք բերում իր երկակի ինքնությունից՝ ներկայանալով միաժամանակ որպես և՛ արևմտյան և՛ ոչ արևմտյան (արևելյան) երկիր: «Իր ինքնությունը, ներառականությունը և մշակութային կապերը որպես արժեքներ ներկայացնելու նրա կարողությունը առաջին պլան են մղվում որպես Թուրքիայի միջնորդական յուրահատուկ կերպ» (Akpınar, 2016, iv): Մինչդեռ Երուսաղեմի Նոտր Դամի համալսարանի պրոֆեսոր Գաբրիել Միտչելը իրավացիորեն նշում է, որ նման ակտիվության համար Թուրքիան չունի համապատասխան ռեսուրս *("Turkey possesses neither the carrots nor the sticks to be a suitable mediator"*): Ավելի կարևոր է, որ Թուրքիայի

անմիջական հարևանությամբ գտնվող երկրների գործերը չափազանց կարևոր ազդեցություն ունեն Թուրքիայի սեփական շահերի վրա, որպեսզի նա համարվի անաչառ երրորդ կողմ (Mitchell, 2015, 177):Ներկայումս Թուրքիան ստանձնել է ռուս-ուկրաինական հակամարտության «խաղաղարարի» դերը, ինչը անվանի ռուս քաղաքագետ Ֆյոդոր Լուկյանովի կարծիքով «շատ բնական է» (Федор Лукьянов, Естественный медиатор Турция):

Թեև Թուրքիայի միջնորդական դերը, մասնավորապես ռուս-ուկրաինական ռազմական առճակատման մեջ, լայնածավալ հանրային և մեդիա քննարկումների առարկա է դարձել, գիտական գրականությունը բավականաչափ չի շեշտադրում այն առանձնակի դրդապատճառները, որով ղեկավարվում են նշված երկիրն ու նրա առաջնորդը՝ միջնորդելով հակամարտության կարգավորմանը:Հատուկ դրդապատճառները կարևոր դեր են խաղում այն պետությունների ջանքերում, որոնք միջնորդությունն օգտագործում են որպես արտաքին, երբեմն էլ ներքին քաղաքականության գործիք: Այդ առումով, այս հոդվածի հիմնական նպատակն է հասկանալ ռուս-ուկրաինական հակամարտությունում Թուրքիայի և անձամբ նրա նախագահի խաղաղության ջանքերի հիմքում ընկած մոտիվացիոն առանձնահատկությունները, ինչպես նաև նրա իրական նպատակները:

Ի լրումն թուրքական միջնորդության հիմնախնդիրների վերաբերյալ ընդհանուր տեսական ակադեմիական աշխատանքների, հոդվածում օգտագործվել են ռուս-ուկրաինական հակամարտության թեմայով թուրք, ուկրաինացի, ռուս, արևմտյան և հայ հեղինակների հրապարակումները:Հետազոտության ժամանակ կիրառվել է փաստական նյութի համեմատական-պատմական, ինչպես նաև մեկնաբանական- տիպաբանական քաղաքագիտական վերլուծության մեթոդը:

Թուրք-ուկրաինական հարաբերությունների պատմությունից: Հարկ է նշել, որ Զապորոժիյեի կազակների շփումները Օսմանյան կայսրության հետ, վերջինիս վասալ Ղրիմի խանության միջոցով արձանագրվում են դեռ XV-րդ դարից (Петр Македонцев, Украина под турецким крылом: исторические причины): Սակայն Թուրքիահում ուկրաինական խնդրի գիտակցումը սկիզբ էր առել Առաջին Աշխարհամարտի տարիներին, երբ Ուկրաինայի ազատագրումը օսմանյան կառավարությունը որոշեց ծառայեցնել իր աշխարհաքաղաքական շահերին: Դեռևս մինչև Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ մտնելը Ուկրաինայի ազատագրության միությունը(ՈՒԱՄ) հանդես եկավ թուրք ժողովրդին ուղղված հայտարարարությամբ (Nesuk, Ksiondzyk, 1996, 207-208):Այդ ուղերձը առաջին պաշտոնական փաստաթուղթն էր Ուկրաինայի և Թուրքիայի նոր շրջանի հարաբերություններում:Ուկրաինան և Թուրքիան համարվում էին դաշնակիցներ,որոնք ունեին ընդհանուր հակառակորդ՝ ի դեմս ռուսական ցարիզմի:ՈՒԱՄ-ի ներկայացուցիչները նույնիսկ հանդիպում ունեցան Էնվեր և Թալեաթ փաշաների հետ:Վերջիններս ողջունեցին Ռուսաստանի փլատակերի վրա ուկրաինական անկախ պետություն ստեղծելու ձգտումը,որը պատնեշ կհանդիսանար դեպի Բալկաններ և Միջերկրական ծով Ռուսաստանի էքսպանսիային: Նրանք հայտարարում էին, որ *Բարձր Դուռը ճանաչում է Ուկրաինայի՝ռուսական պետությունից անջատվելու անհրաժեշտությունը, և որ պատերազմում Ռուսաստանի ջախջախումից հետո Օսմանյան կառավարությունը պատրաստ կլինի աջակցել ուկրաինական ժողովրդին ստեղծելու անկախ պետականություն:* Համարվում էր, որ ուկրաինական ժողովրդի

ազատագրական պայքարի հաջողությունը, Ուկրաինայի անջատումը Ռուսաստանից մեծ հարված կհասցներ Ռուսաստանի ավանդական քաղաքականությանը և կազատեր Թուրքիային շուրջ 200 տարի սպառնացող վտանգից:

Օսմանյան կայսրության և Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1918 թվականի փետրվարի 9-ին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրումից հետո, որի արդյունքում Բարձր Դուռը ճանաչեց Ուկրաինան որպես անկախ պետություն (Турецко-украинские отношения имеют 100-летнюю историю):

Ուկրաինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1922 թվականի հունվարի 2-ի Բարեկամության և եղբայրության պայմանագրի ստորագրումից հետո, որի արդյունքում նրանք ճանաչեցին միմյանց (Nesuk , Ksiondzyk, 1996, 212):

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ուկրաինան և Թուրքիան սկսեցին համագործակցության նոր փուլ: Թուրքիան ճանաչեց Ուկրաինայի անկախությունը1991 թվականի դեկտեմբերին, ավելի ուշ՝ Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին արձանագրությունը և Ուկրաինայի և Թուրքիայի Հանրապետության միջև բարեկամության և համագործակցության պայմանագիրը ստորագրվել են 1992 թվականին (Канарова, 2020, 33-41):

Երկրների միջև քաղաքական երկխոսությունը Ռ.Էրդողանի ղեկավարության առաջին շրջանում զարգացել է երկու ուղղությամբ՝ Սև ծովի անվտանգություն և Ղրիմի թաթարներին աջակցություն: 2003 թվականից երկրները հայտարարել են ռազմավարական հարաբերությունների կարգավիճակին անցնելու իրենց ցանկության մասին, սակայն Ուկրաինան գլոբալ հետաքրքրություն չէր ներկայացնում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ մինչև 2013թ. ուկրաինական հեղափոխական իրադարձությունները: Պատճառը՝ թե՛ Ուկրաինայի, թե՛ Թուրքիայի Ռուսաստանի հետ ունեցած հարաբերություններն էին:

Ուկրաինական «արժանապատվության հեղափոխությունը» 2013-2014 թթ., իսկ 2015 թվականին Ռուսաստանի և Թուրքիայի միջև տեղի ունեցած «ինքնաթիռային ճգնաժամը» արմատապես փոխեցին Սև ծովափնյա աշխարհաքաղաքականությունը և Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը:Այս իրադարձությունների շարքը հանգեցրեց Թուրքիայի կողմից Ուկրաինայի նկատմամբ իր քաղաքականության վերանայմանը:

Մինչ «ինքնաթիռային ճգնաժամը» Թուրքիան հանդես էր գալիս որպես յուրօրինակ «հաշտարար» Ռուսաստանի և Ուկրաինայի միջև, սակայն 2015 թվականից հետո Թուրքիայի Հանրապետությունն ուկրաինական հարցում առաջնահերթությունը տվեց Ուկրաինային (Канарова, 2020, 34): Ինչպես նշում են մասնագետները, Ուկրաինայի և Թուրքիայի տնտեսական համագործակցությունը միանշանակ նոր մակարդակի է հասել, սակայն կան նաև մի շարք հակասություններ: Նախ, թեև Թուրքիան հանդես է գալիս Ուկրաինայի տարածքային ամբողջականության օգտին, սակայն չի աջակցում Ռուսաստանի Դաշնության դեմ սահմանված պատժամիջոցներին: Երկրորդ՝ ազատ առևտրի գոտու համաձայնագրի ստորագրման հետ կապված հակասություններ կան. Թուրքիայի Հանրապետությունը չկատարեց իր խոստումը՝ ձեռնարկեց Ռուսաստանի հետ «Թուրքական հոսք» նախագիծը՝ շրջանցելով ուկրաինական

պետությունը (Канарова, 2019, 1540-1541)։Սակայն Թուրքիայի անհանգստության հիմնական պատճառը Ղրիմի միացումն էր Ռուսաստանին։

Ղրիմի հարցը: Ստամբուլի համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի պրոֆեսոր Շեներ Աքթուրքը, խոսելով Ուկրաինայի ճգնաժամի ունեցած ազդեցությունների տեսանկյունից թուրքական շահերի վրա՝հետևյալն է նշում. *«Այն, որ հիմա Ռուսաստանը պաշտոնապես և փաստացիորեն ղեկավարում է Ղրիմը, նշանակում է, որ Ռուսաստանը կրկին դառնում է գլխավոր ուժը Սև ծովում, ինչպես Սառը պատերազմի և նրա սկսվելուց 200 տարի առաջ էր: Եվ Թուրքիայի համար դա Ուկրաինայի ճգնաժամի ամենաբացասական հետևանքն է: ԽՍՀՄ-ի փլուզման և սառը պատերազմի ավարտի մեջ Անկարայի համար ամենամեծ օգուտը կայանում էր նրանում, որ Ռուսաստանը, ի դեմս որի Թուրքիան 300 տարվա ընթացքում տեսնում էր գլխավոր աշխարահաքաղաքական սպառնալիքը, նահանջեր դեպի Կովկասի հյուսիսը և զրկվեր Սև ծովում իր ունեցած ազդեցությունից: Մենք չպետք է մոռանանք, որ Թուրքիան ունի խորը մշակութային կապեր Ղրիմյան թաթարների հետ: Այդ տեսանկյունից Ռուսաստանը խլել է Թուրքիայի համար Ուկրաինայի կարևորագույն մասը»* (Kamil Arlı, “Türkiye son 6 yılda Rusya’ya 3 defa mağlup oldu”):

Ղրիմի թերակղզին և այնտեղ ապրող թաթարները միշտ էլ եղել են Թուրքիայի ուշադրության կենտրոնում: Ղրիմի խանությունը (ստ.1441թ.) մի քանի հարյուրամյակ (1475-1783թթ.) գտնվել է Օսմանյան կայսրության ենթակայության տակ, իսկ Ռուսական կայսրությանն է միացվել 240 տարի առաջ՝ համաձայն կայսրուհի Եկատերինա II-ի 1783 թ. մանիֆեստի: Ղրիմի թերակղզու Ռուսական կայսրությանը միանալուց հետո շատ թաթարներ արտագաղթում են Թուրքիա։Արտագաղթի մեծ ալիք տեղի ունեցավ 1853-56 թվականներին, երբ Ղրիմի պատերազմում կրած պարտության պատճառով ռուսները թուրքերին զիջեցին Օսմանյան կայսրությունից նախկինում գրաված որոշ տարածքներ, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանում և այդ գնով կարողացան պահպանել Ղրիմը: 1917-20-ական թվականների քաղաքացիական պատերազմի ժամանակ ևս մի քանի անգամ Ղրիմը ձեռքից ձեռք անցավ, ինչի հետևանքով ղրիմաթաթարների զգալի հատված կրկին հայտվեց Թուրքիայում: Այսպիսով, ներկայումս Թուրքիայում գոյություն ունի մեծ ղրիմաթաթարական համայնք:

1954 թ., ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ն. Խրուշչովի առաջարկությամբ, Ղրիմի շրջանը և հանրապետական նշանակության Սևաստոպոլ քաղաքը Ռուսաստանի խորհրդային ֆեդերատիվ սոցիալիստական հանրապետության կազմից փոխանցվել է Ուկրաինայի խորհրդային սոցիալիստական հանրապետության կազմին։1954 թ. փետրվարի 19-ին հրապարակված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության այդ հրամանագիրը Թուրքիայում աննկատ չանցավ: Թուրքական որոշ լրատվամիջոցներ նշում էին, որ Ռուսաստանը խախտում է դեռևս 18-րդ դարում Օսմանյան կայսրության հետ կնքված իր համաձայնագրերը Ղրիմի կարգավիճակի վերաբերյալ և դրանով իսկ հիմք է ստեղծում «Ղրիմյան հարցի» քննարկման համար՝ երկկողմանի և միջազգային ձևաչափերով: Հոդվածագիրները նշում էին, որ *Թուրքիան նախօրոք տեղյակ չի պահվել Ղրիմի՝ Ուկրաինային փոխանցելու մասին և վկայակոչում էին 1774 թ. Քյուչուկ-Քայնարջիի պայմանագիրը, որով Ղրիմի թերակղզին Օսմանյան կայսրությունից անցնում էր Ռուսաստանին, սակայն հատուկ կետով նշվում էր, որ թերակղզին չի կարող*

անկախանալ կամ տրվել երրորդ կողմին, հակառակ դեպքում՝պետք է վերադարձվի թուրքական կողմին (Nerdun Hacıoğlu, Ukrayna parçalanırsa, Türkiye'nin Kırım hakkı doğar):

Նշված ժամանակաշրջանում Թուրքիան այլևս ԽՍՀՄ-ի հետ իր հարաբերությունները դիտարկում էր ոչ այնքան երկկողմանի, այլ ավելի լայն՝ ԽՍՀՄ-Արևմուտք հարաբերությունների ծիրում: Ուստի պաշտոնական Անկարան որոշեց ժամանակավորապես հետաձգել իր «ղրիմյան հավակնությունները»՝ սպասելով հարմար առիթի: 1961թ. Կարիբյան ճգնաժամից հետո Թուրքիայի տարածքում ամերիկյան միջնահեռ հրթիռների տեղադրումը խորհրդա-թուրքական հարաբերությունների սրման պատճառ դարձավ, իսկ 1968 թ. Չեխոսլովակիայի հայտնի դեպքերը հանգեցրին ԽՍՀՄ-Արևմուտք դիմակայության ուժգնացմանը: Այս պայմաններում Թուրքիան «հիշեց» Ղրիմի հարցը և սկսեց համապատասխան քայլեր ձեռնարկել՝ ՄԱԿ-ի Միջազգային դատարան հայցով դիմելու ուղղությամբ: 1968 թ. վերջին «Ղրիմյան հայցը» ներկայացվեց դատարան: Անկարան, վկայակոչելով 1774 թ. Քյուչուկ-Քայնարջիի պայմանագիրը, ըստ որի Թուրքիան ճանաչում էր թերակղզու նկատմամբ միայն Ռուսաստանի և ո՛չ այլ երկրի ինքնիշխանությունը, առաջարկում էր քննարկել Ղրիմի՝Թուրքիայի կազմում ինքնավար կարգավիճակի վերականգնումը: Սակայն 1969թ. Միջազգային դատարանը մերժեց Թուրքիայի հայցն այն հիմնավորմամբ, որ նշված պարագայում տվյալ տարածքի փոխանցումը տեղի է ունեցել մեկ պետության՝ԽՍՀՄ-ի կազմում, որն իրավաբանորեն ներկայացնում է նաև Ռուսաստանը: Դատարանում ձախողվելուց հետո Անկարան որոշ ժամանակով դադարեց բացեիբաց խոսել Ղրիմի հարցի մասին:

Ղրիմի՝ Ռուսաստանին բռնակցելուց հետո Ահմեդ Դավութօղլուն աշխատանքային այցով մեկնեց Ուկրաինա, որտեղ հանդիպելու էր «բոլոր շահագրգիռ կողմերի» հետ:Թե՛ Ուկրաինայի ղեկավարների, թե՛Ղրիմի թաթարների հետ իր ունեցած հանդիպումներում նա ընդգծում էր, որ Ղրիմի հարցը պետք է լուծվի Ուկրաինայի տարածքային ամբողջականության շրջանակներում, նաև առաջարկում էր Թուրքիայի միջնորդությունը:

Դեռևս Ահմեդ Դավութօղլուի վարչապետությամբ 62-րդ կառավարության ներկայացրած ծրագրում, այնուհետև հաջորդող կառավարությունների ծրագրերում տեղ էր հատկացվել ուկրաինական ճգնաժամին, Ուկրաինան որակվել էր որպես Թուրքիայի ռազմավարական գործընկեր երկիր, իսկ Ղրիմի թաթարների անվտանգության ապահովումը որպես առաջնահերթություն թուրքական կառավարության համար:

Թուրքիայի համար ներկայումս իրավիճակն այնպիսին է, որ Ղրիմի թաթարներին բացահայտ աջակցելու և ֆինանսավորելու ծրագրերը Մոսկվայի կողմից կարող են դիտվել որպես Ռուսաստանի ներքին գործերին միջամտություն, քանի որ Ղրիմը այսօր Ռուսաստանի դաշնային սուբյեկտ է:

Չի բացառվում,այնուամենայնիվ, որ Անկարան փորձելու է օգտագործել Ղրիմի թաթարներին որպես այսպես կոչված 5-րդ շարասյուն՝ թերակղզում հարմար առիթի դեպքում անկայունության օջախ ստեղծելու համար, մեծ զգուշավորությամբ և հնարավոր է Կիևի իշխանությունների միջոցով:Ուստի Թուրքիան, հանդես գալով որպես միջնորդ, մշտապես «ձեռքը զարկերակի վրա պահելու» մարտավարություն է իրականացնում (Հովհաննիսյան, 2014, 16-31):

Թուրքիայի համագործակցությունը Ուկրաինայի հետ ռազմաարդյունաբերության ոլորտում: 2019 թվականի օգոստոսի 10-ին հայտարարվեց բարձր ճշգրտության սպառազինությունների և

հրթիռային-տիեզերական տեխնոլոգիաների ոլորտում համատեղ ձեռնարկության ստեղծման մասին՝ ուկրաինական «Ուկրսպեցէքսպորտ» պետական ընկերության և թուրքական *«Baykar Defence»*-ի մասնակցությամբ: Նշվում էր, որ այն ստեղծվել է զենքի սերիական համատեղ արտադրության ջանքերը համատեղելու նպատակով:Մինչև 2021 թվականի ապրիլը «Բայրաքթար» TV2-ը Կիևին մատակարարվել էր արդեն երկու տարի: Անցկացվել էր նաև մարտական կիրառման ուսուցում և կառավարվող զենքի մատակարարում, այդ թվում՝ բարձր ճշգրտության: Թուրքական ռազմական արտադրանքի արտահանումը Կիևին 2022 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա համեմատ աճել է 30 անգամ: Նույնիսկ Արևմուտքի կողմից Ուկրաինային զենքի զանգվածային մատակարարումների սկզբում Թուրքիան այս ցուցանիշով զիջում էր միայն ԱՄՆ-ին և Լեհաստանին:

Ի պատասխան Ռուսաստանի արտգործնախարարության բողոքի՝ Թուրքիայի փոխարտգործնախարար Յավուզ Սելիմ Քըրանը ծաղրելով պատասխանել է, որ Անկարան «Բայրաքթար» անօդաչու թռչող սարքերն Ուկրաինային չի փոխանցել որպես օգնություն, սա գնում է մասնավոր ընկերությունից»: Մնում է ճշտել, որ Baykar Makina ընկերությունը պատկանում է նախագահ Էրդողանի փեսային:

Թուրքերը հատուկ ուշադրություն են դարձնում ուկրաինական ռազմարդյունաբերական համալիրի առաջատար Զապորոժիյեի «Պրոգրես» մեքենաշինական կոնստրուկտորական բյուրոյի «Մոտոր Սիչ» գործարանին: Հենց նրա արտադրանքն է առանձնահատուկ տեղ գրավում շատ ավելի հզոր անօդաչու թռչող սարքերի ստեղծման պլաններում, որոնցից են օպերատիվ-ռազմավարական «Աքընջին» և նույնիսկ «խոստումնալից անօդաչու կործանիչը» (*Антон Веселов*, Турция и события на Украине):Այսպիսով, Թուրքիան փորձում է օգտագործել Ուկրաինայի գիտական, տեխնոլոգիական ներուժը՝ հատկապես ռազմաարդյունաբերության ոլորտում:

2022 թվականի օգոստոսի 18-ին Լվովում, Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ներկայությամբ, փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել ենթակառուցվածքների վերականգնման մասին, որը նախատեսում է Թուրքիայի մասնակցությունը Ուկրաինայի հետպատերազմյան վերականգնմանը:Թուրքական մամուլը գրում է, որ Էրդողանին մոտ խոշոր շինարարական ընկերություններն արդեն սպասում են շահավետ տենդերների:«Թուրքիան աշխարհառազմավարականորեն անցել է Ուկրաինայի կողմը»,- խոստովանում է կառավարամետ Քաղաքական, տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (SETAV) արտաքին հետազոտությունների տնօրեն Մուրադ Յեշիլթաշը (Андрей Арешев, Турция как фактор украинского кризиса):

Այդ դեպքում ինչպե՞ս է ռուս-ուկրաինական բանակցությունները կազմակերպելու Անկարայի փորձը, Մոսկվայի դեմ պատժամիջոցներ կիրառելուց հրաժարվելը, Կիևին տարատեսակ ոչ մահաբեր սպառազինությունների հերթական մատակարարումները և ականազերծման սարքավորումները, չհաշված նախկինում վաճառված «Բայրաքթար» անօդաչուները, համակցվում Ռուսաստանի հետ սերտ հարաբերությունների հետ:Նրանք փորձում են իրավիճակից օգտվել իրենց օգտին:Թուրքերը գիտեն, որ եթե դու ռեսուրս չունես, գտիր նրանց, ով դրանք ունի և ստիպիր քեզ հետ կիսվել: Բացի դրանից, գործում է արևելյան modus operandi-ն «մի կծիր քեզ կերակրող ձեռքը»(seni besleyen eli ısırma):Ահա թե ինչու Անկարան չի միանում

Ռուսաստանի դեմ պատժամիջոցներին,- բացատրում է թուրքագետ Վլադիմիր Ավատկովը (Державные амбиции Турции и главный интерес России: война и мир на Кавказе – мнение):

Թուրք-ռուսական հարաբերությունների որոշ առանձնահատկություններ: «Թուրքիան շատ առումներով կախված է Ռուսաստանից»,- ասում է Ատլանտյան խորհրդի վերլուծական կենտրոնի թուրքաբնակ Եվգենյա Գաբերը՝ մատնանշելով ռուսական զանգվածային զբոսաշրջությունը Թուրքիայում և ռուսական էներգետիկ հոսքերը:Ռուսաստանը 2021 թվականին ապահովել է Թուրքիայի նավթի ներկրման մոտ մեկ քառորդը և բնական գազի կարիքների գրեթե կեսը, իսկ Մոսկվան վերահսկում է նաև Թուրքիայում կառուցվող «Աքքույու» ատոմակայանը: Թուրք-ռուսական հարաբերությունների ճգնաժամը, շարունակեց նա, «անմիջապես հակադարձ արդյունք կունենա և ընտրություններին ընդառաջ Էրդողանի համար շատ խնդիրներ կստեղծի» (Россия давит на Турцию там, где может, и чего хочет Эрдоган – Евгения Габер):

Նախկին թուրք դիվանագետ Սինան Ուլգենի խոսքերով, Թուրքիան*«իրեն դիրքավորում է ուկրաինամետ, բայց ոչ հակառուսական»*: Ռուսաստանը և Թուրքիան տարածաշրջանում մի քանի հակամարտությունների հակառակ ծայրերում են եղել, այդ թվում՝ Ղրիմում: Սակայն Պուտինի և Էրդողանի միջև դիվանագիտականգործընկերությունը նաև օգնել է տարածաշրջանում որոշ հակամարտությունների կարգավորմանը, ասել է նախկին դիվանագետը՝ մատնանշելով Սիրիայի հարցով Աստանայի խաղաղ գործընթացը և վիճելի Լեռնային Ղարաբաղի շուրջ համաձայնությունը (Александр Белов, В вопросе Украины Эрдоган ходит по тонкой грани – POLITICO):

Թուրքիա-Արևմուտք հարաբերություններ: Ուկրաինայի հակամարտությունը փորձության է ենթարկել վերջին տարիներին Թուրքիայի նախագահի վարած արտաքին քաղաքականությունը, հատկապես Արևմուտքի և Ռուսաստանի միջև Թուրքիայի դիրքորոշման և անկախ արտաքին քաղաքականություն վարելու Անկարայի ջանքերի համատեքստում: 2016 թվականից Անկարան ավելի մոտ է Մոսկվային՝ ՆԱՏՕ-ի դաշնակիցների հետ հարաբերությունների հաշվին:Հետևաբար, պատերազմի վերաբերյալ Թուրքիայի դիրքորոշումը տարբեր և երբեմն հակասական նկատառումների միակցություն է Անկարայի՝ և՛ Մոսկվայի և՛ Կիևի հարաբերությունների, ինչպես նաև Թուրքիայի և ՆԱՏՕ-ի նրա դաշնակիցների հարաբերությունների համատեքստում:Անկարան հույս ունի, որ այն կապերը, որոնք Թուրքիան զարգացրել է Ռուսաստանի հետ վերջին տարիներին, այժմ արևմտյան երկրների կողմից կընկալվեն որպես առավելություն, որը թույլ է տալիս կապուղի ունենալ մեկուսացված նախագահ Պուտինի հետ (Remi Daniel, Gallia Lindenstrauss, Walking a Fine Line: Turkey's Mediation between Russia and Ukraine, and Relations with the West):

Ընդհանուր առմամբ, ըստ թուրքական News International վերլուծական կենտրոնի, «ԱՄՆ-ը լրջորեն անհանգստացած է այն իրավիճակով, երբ թուրքական նավը պոկվել է ՆԱՏՕ-ի խարիսխներից և սկսել շարժվել դեպի Արևելքի նավահանգստներ» (Станислав Тарасов, Турцию хотят превратить в «Украину-2»):

Նիդեռլանդների Գրոնինգենի համալսարանի միջազգային հարաբերությունների գծով պրոֆեսոր Ֆրանչեսկո Ջումելին ասում է, որ դեռ հայտնի չէ, թե որքան ժամանակ ԵՄ-ն և ՆԱՏՕ-ի մյուս անդամները կհանդուրժեն Էրդողանի «այս կրկնակի խաղը Պուտինի հետ պայմանավորվածություններ ձեռք բերելու և ՆԱՏՕ-ին իր անդամակցությունը, ԱՄՆ-ին մոտ

լինելը պահպանելու միջև»: Ամերիկացի պաշտոնյաներից մեկն ասել է, որ եթե Թուրքիան Ռուսաստանի հետ տնտեսական գործընկերության միջոցով օգնելու է վերջինիս շրջանցել պատժամիջոցները, ապա Վաշինգտոնը «խորհուրդ կտա» արևմտյան ընկերություններին խզել կամ կրճատել իրենց տնտեսական կապերը Թուրքիայի հանրապետության հետ:Եթե Արևմուտքը կարողանա ապացուցել, որ Թուրքիան օժանդակում է պատժամիջոցներից խուսափելուն, Վաշինգտոնը կարող է ավելի հեռուն գնալ՝ Թուրքիային կտրելով դոլարից երկրորդական պատժամիջոցների գործադրմամբ(Александр Белов, В вопросе Украины Эрдоган ходит по тонкой грани – POLITICO):

Ներքին քաղաքականություն, կամ «All politics is local»: Ռեջեփ Թայիփ Էրդողանն ապրում է իր կառավարման պատմության մեջ, թերեւս, վատթարագույն շրջանը: Երկրում ավելի ու ավելի են զգացվում տնտեսական ճգնաժամի ֆոնին քաղաքական և սոցիալական լարվածությունը: Տարեսկզբին Թուրքիայում տարեկան գնաճը հասել է քսան տարվա առավելագույնին, գործազրկության մակարդակը կազմել է 15-20 տոկոս, հիմնական ապրանքների և ծառայությունների գներն աճել են գրեթե 30-50 տոկոսով, իսկ թուրքական լիրան զգալի չափով նվազել է: Միևնույն ժամանակ, 2023 թվականին Թուրքիայում պետք է անցկացվեն նախագահական և խորհրդարանական ընտրություններ, և, դատելով բոլոր հարցումներից, Թուրքիայի իշխող Արդարություն և զարգացում կուսակցությունը (ԱԶԿ), որի առաջնորդը մնում է Ռեջեփ Թայիփ Էրդողանը, անընդհատ կորցնում է ժողովրդականությունը:

Ռուսաստանի ներխուժումն Ուկրաինա, ինչպես զգուշացնում են ՄԱԿ-ը և այլ միջազգային կազմակերպություններ, այդ թվում՝ իրավապաշտպան կազմակերպությունները, կարող է հանգեցնել համաշխարհային պարենի պակասի և նույնիսկ իրական աշխարհի սովի, որը կազդի առնվազն հարյուր միլիոնավոր մարդկանց վրա: Իսկ Անկարայի համար հիմա դա հատկապես վտանգավոր է: Մեծ Մերձավոր Արևելքի բոլոր երկրներում՝ Թուրքիայից մինչև Մարոկկո, վերջին մի քանի ամիսների ընթացքում, օրինակ, ալյուրի, ձավարի և այլնի պահանջարկի բում է նկատվում՝ դեֆիցիտի վտանգի և գների կայուն աճի պատճառով: Բազմաթիվ իսլամական պետությունների իշխանություններն արդեն մտավախություն են հայտնում, որ ռուս-ուկրաինական պատերազմը կարող է հանգեցնել զանգվածային անկարգությունների և սոցիալական պայթյունի, քանի որ պարենային ապրանքների գների բարձրացումն էր, որ ժամանակին առաջացրեց մի շարք ընդվզումներ և արդյունքում՝ «Արաբական գարուն» տարածաշրջանում:

Իսկ Թուրքիան սննդամթերքի մատակարարման հարցում միշտ մեծ կախվածություն է ունեցել թե՛ Ռուսաստանից, թե՛ Ուկրաինայից: 2021 թվականին Թուրքիա ներմուծվող ամբողջ ցորենի գրեթե 65 տոկոսը մատակարարվել է Ռուսաստանի կողմից, իսկ Ուկրաինայից՝ ավելի քան 13 տոկոսը: Արդեն անցյալ տարվա մարտին ցորենի գնի կտրուկ աճի պատճառով Թուրքիան հայտարարեց, որ ստիպված է լինելու շատ խիստ՝ գրեթե 30 տոկոսով նվազեցնել արտերկրից իր գնումները:

Էրդողանը, ինչպես և Պուտինը, շատ ավտորիտար առաջնորդ է, իրականում գրեթե դիկտատոր (բռնապետ): Ռեջեփ Թայիփ Էրդողանը վերջին տարիներին աննախադեպ մեծ ուժ է կենտրոնացրել իր ձեռքում, վերացրել է ԱԶԿ-ում բոլոր ներկուսակցական հակասությունները,

բոլոր ներկուսակցական ընդվզումները և մեծապես թուլացրել է իրեն ընդդիմացող մյուս քաղաքական կուսակցությունները, հատկապես 2016-ի, այսպես կոչված, ռազմական հեղաշրջման փորձից հետո, որը բազմաթիվ փորձագետների մոտ հարցեր է առաջացնում: Հիմա Թուրքիան, ի լրումն ամեն ինչի, դարձյալ Էրդողանի առաջարկով վերածվել է նախագահական-խորհրդարանական հանրապետության, և նա կցանկանար որքան հնարավոր է երկար պահել իր իշխանությունը և շարունակել ընդլայնել այն (Алексадр Гостев, Игры Эрдогана с Украиной, Россией и войной. Чего хочет Турция):

Այդ առումով Ուկրաինայի տարածքում լայնամասշտաբ ռազմական հակամարտությունը թույլ է տալիս նրան, մի կողմից, հանդես գալ որպես ուժեղ երկրի առաջնորդ, որը կարող է իր միջնորդական ծառայությունները մատուցել պատերազմող հակառակորդներին, իսկ մյուս կողմից հնարավորություն՝ փորձելու, ինչպես Ալեքսանդր Լուկաշենկոն ժամանակին Ուկրաինայի վերաբերյալ Մինսկի համաձայնագրերի հետ կապված, դուրս գալ մասնակի դիվանագիտական մեկուսացումից, որում Էրդողանն այժմ հայտնվել է իր մեղքով, առաջին հերթին՝ ԵՄ-ի և, ընդհանրապես, Արևմուտքի հետ հարաբերություններում:Հավանաբար, Թուրքիայի նախագահը ցանկանում է վերջ տալ այս պատերազմին՝ բայց ստանալով աշխարհաքաղաքական և դիվանագիտական նշանակալի բոնուսներ:

Բացի այդ, Թուրքիայի տնտեսությունը խորը ճգնաժամի մեջ է, և եթե Էրդողանը հնարավորություն չունի արագ հաղթահարելու այդ ճգնաժամը, ապա կարող է փորձել բարձրացնել անձնական ներքին վարկանիշը այլ կերպ: Հաջորդ ընտրությունները սպասում են Էրդողանին և նրա կուսակցությանը, ընդդիմությունը գլուխ է բարձրացնում երկրի ներսում, և դափնիները, եթե ոչ մեծ հաղթողի, ապա այս դեպքում մեծ խաղաղարարի դափնիները կարող են օգտակար լինել նրան:

Միևնույն ժամանակ, այդ գործարքներից (Ռուսաստանից և Ուկրաինայից) եկամուտ են ստանում Էրդողանի ընտանիքի անդամներն ու նաև նրա անմիջական շրջապատի մերձավոր գործարարները:

«Հացահատիկի գործարքը»: Թուրքիայի միջնորդության թերևս միակ շոշափելի արդյուքը նշված գործարքն է: Առաջին բեռնափոխադրումը Օդեսայից մեկնել էր 2022թ.օգոստոսի 1-ին Թուրքիայի և ՄԱԿ-ի միջնորդությամբ կնքված գործարքի համաձայն, ինչը թույլ էր տալիս արտահանել պատերազմի պատճառով ուկրաինական պահեստներում կուտակված մոտ 22 միլիոն տոննա հացահատիկը(Andrew Wilks, Turkey hopes to extend mediation role in Ukraine war after grain deal success): Նշված առիթով հրապարակային ելույթներում Թուրքիայի նախագահ Էրդողանն ընդգծում էր, որ թեև Արևմուտքի միջնորդական ջանքերը հաջողություն չբերեցին, Թուրքիան քայլեր ձեռնարկեց և հնարավոր դարձրեց հացահատիկի գործարքը (Erdogan: Black Sea grain deal result of Türkiye's mediation):

Թուրքական իշխանամերձ ԶԼՄ-ները ջանք ու եռանդ չեն խնայում՝վերածելու այդ արդյունքը քաղաքական կապիտալի: *«Թուրքիայի դիրքորոշումը, հատկապես Ռուսաստանի և Ուկրաինայի միջև տարբեր մակարդակների բանակցություններում, 2022 թվականը դարձրեց իրապես Թուրքիայի տարի»,*- գրում է «Անադոլու» գործակալության լրագրող Սամի Քիրազը (Sami Kiraz, 3 SORUDA - 2022'de Türkiye'nin arabulucu rolü):

Իսկ Արտաքին գործերի նախարար Մևլութ Չավուշօղլուն ելույթ ունենալով TRT World Forum 2022-ում, ասել է.«Թուրքիան շարունակում է օրինակ հանդիսանալ միջազգային հանրության համար՝ ամբողջ աշխարհում մարդու իրավունքների բոլոր տեսակի խախտումների, այդ թվում՝ հակահիսլամականության, այլատյացության և ռասիզմի դեմ իր պայքարով» (Türkiye dünyaya örnek):

Հարկ է նշել, որ սույն գործարքը Թուրքիայի համար ոչ միայն հեղինակության, այլ նաև տնտեսական հետաքրքրություն ներկայացնող հարց է. Անկարան հնարավորություն է ստանում պարենը ստանալ 25-30% զեղչված գնով, ինչպես նաև վերավաճառել ցորենը երրորդ երկրներին (Полина Коноплянко, Оценена выгода Турции от зерновой сделки):

«Մրցակցային գործընկերություն»: Պատմականորեն ավանդաբար Թուրքիան ազդեցություն է ունեցել Ուկրաինայի հարավային մասում, ուստի նրանց մերձեցումն ընկալվում է որպես բնականոն գործընթաց: Ինչ վերաբերում է «պատմական ախոյաններ» Ռուսաստանին և Թուրքիային, ապա շատ մասնագետների կարծիքով նրանք իրականում շատ առումներով նման են միմյանց. նրանց քաղաքական համակարգը, տնտեսական կառավարումը, արտաքին քաղաքականությունը և աշխարհաքաղաքական ինքնաընկալումը ունեն մի շարք ընդհանրություններ: Այնուամենայնիվ, ռուսական և թուրքական վարչակարգերի միջև նմանությունները չպետք է չափազանցվեն. նրանց քաղաքական պատմությունն ու համակարգերը խորապես տարբեր են, մինչդեռ կան նաև էական տարբերություններ նրանց տնտեսության, ազգային գաղափարախոսությունների և նույնիսկ նրանց փոխհարաբերությունների մի քանի հիմնական ասպեկտներում Արևմուտքի և Չինաստանի հետ (Secrieru, Saari, Bechev, 2021, pp.6-8):

Իսկ ռուս-թուրքական բարեկամության այս նոր փուլը, ի թիվս այլ օբյեկտիվ պատճառների, փորձագետների մեծ մասը պայմանավորում է երկու երկրների առաջնորդների՝ Պուտինի և Էրդողանի անձնական տիպաբանական ընդհանրություններով:Օրինակ, գերմանական Die Welt-ի վերլուծաբան Սոնյա Բլաշկեի կարծիքով՝ այդ երկու քաղաքական գործիչներին միավորում է «*կառավարման ինքնակալ (ավտոկրատիկ) եղանակը, կրոնական և էթնիկ միատարրության և մշակութային անկրկնելիության գաղափարների վրա արմատավորված ծայրահեղ ազգայնականությունը, ինչպես նաև անցյալում կրած իրական կամ երևակայական նվաստացումների համար վրեժխնդիր լինելու ցանկությունը»* (Соня Блашке, Опасный альянс униженных лидеров):

Ընդհանրապես, Էրդողանի օրոք վերջին տարիներին Թուրքիան, ինչպես և Ռուսաստանը Պուտինի օրոք, «ծնկից վեր կենալու» քաղաքականություն է վարում: Խոսելով Պուտինի և Էրդողանի տիպաբանական նմանությունների մասին վերլուծաբան Ջոշուա Քիթինգը նշում է, որ ավելի քան որևէ խնդիր, Էրդողանին և Պուտինին միավորել է ընդհանուր աշխարհայացքը. Իրենց ազգերին պատմական փառքը վերադարձնելու ցանկությունը, հիասթափությունը՝ մարդու իրավունքների և ժողովրդավարության մասին արևմտյան կեղծավոր դասախոսություններից, ինչպես նաև դավադրության տեսություններին հակվածությունը: Համարվում է, որ երկուսի միջև կապերն ամրապնդվեցին 2016 թվականին, երբ Պուտինը անհապաղ աջակցություն հայտնեց Էրդողանին հեղաշրջման փորձից հետո, մինչդեռ արևմտյան կառավարությունների մեծ մասը լռում էր (Joshua Keating, How Turkey is turning the war in Ukraine to its own advantage):

Համեմատելով Թուրքիայի քաղաքականությունը «լարախաղացության հետ ամերիկյան հայտնի քաղաքագետ Սոներ Չաղափթայը նկատում է, որ Էրդողանը պետք է մշտապես հավասարակշռության մեջ պահի Թուրքիային, որն աջակցում է Ուկրաինային՝ միևնույն ժամանակ Ռուսաստանի հետ առևտուրն ու զբոսաշրջությունը բաց պահելու և Պուտինի հետ հարաբերությունները զարգացնելու իր քաղաքականությամբ: *«Բայց նա դրանով այս ճգնաժամից դուրս գալու հնարավորություն է ստեղծել՝ Թուրքիային դիրքավորելով որպես միակ երկիր, որը կարող է խոսել երկու կողմերի հետ»* (Joshua Keating, How Turkey is turning the war in Ukraine to its own advantage):

Թուրքիայի՝ «լինել ամենուր միաժամանակ»արտաքին քաղաքականությունը (Turkey's "everywhere-all-at-once" foreign policy): Էրդողանը չի թաքցնում իր մեծատիրական ծավալապաշտական հավակնությունները, դրանց իրականացման համար օգտագործելով թե՛ իր proxy ուժերը (օրինակ, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում), թե՛ դիմելով նույնիսկ անմիջական ռազմական միջամտությանը (օրինակ, Սիրիայում): Քաղաքագետ Ֆյոդոր Լուկյանովի մեկնաբանմաբ, եվրոպական ուղղությամբ ձախողումը Անկարային ուղարկեց դեպի այլ ճանապարհ. Էրդողանը ցանկանում է Թուրքիան վերածել մեծ տերության՝ հավակնելով վերականգնել նրա երբեմնի ազդեցությունը նախկին Օսմանյան կայսրության սահմաններում: Մերձավոր Արևելք, Հյուսիսային Աֆրիկա, Հարավային Կովկաս, Բալկաններ և Միջերկրական ծով՝ ամենուր ավելի քան ակտիվ թուրքական քաղաքականություն է: Փորձագետներն արդեն մի քանի տարի ասում են, որ Թուրքիայի այդ թափը գերազանցում է իր իրական ներուժը, և նա պետք է չափավորի իր ախորժակը: Հավանաբար նման ընթացքի հիմնական պատճառը անձնական գործոնն է: Ռեջեփ Թայիփ Էրդողանը անշեղորեն հավատարիմ է Թուրքիային՝ (և ինքն իրեն համապատասխանաբար) աշխարհի բարձրագույն լիգա տանելու գաղափարին (Лукьянов: Находившиеся на вторых ролях державы становятся более напористыми):Թուրքիայի հավակնոտ քաղաքականությունը, բնականաբար, դժգոհություն է առաջացնում թե՛ Ռուսաստանում, թե՛ Արևմուտքում: Թուրքիան չի հրաժարվում Բալկաններում, Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում իր վարած քաղաքականությունից, ինչը հակասում է Ռուսաստանի շահերին:Ռուսաստանի հետ «սիրախաղերը», Սիրիայում և Միջերկրականում ձեռնարկվող քայլերը՝ առանց ՆԱՏՕ-ի դաշնակից երկրների կարծիքների հետ հաշվի նստելու, զսպվող զայրույթ են առաջացնում արևմտյան երկրներում:Ուկրաինական հակամարտությունը փոխում է պատկերը:Կիևյան վերլուծաբան Սերգեյ Դանիլովի խոսքերով,Թուրքիան կարծես ստիպված էր սպասել ՆԱՏՕ-ում Շվեդիայի ու Ֆինլանդիայի ընդունման շուրջ ստեղծված ճգնաժամին, որի արդյունքում Անկարայի ձայնը սկսեց կշռել շատ ավելի, քան ամիսներ առաջ էր: Բացի դրանից, Ուկրաինա ներխուժումից հետո Ռուսաստանի մարգինալացումը խաղում է Էրդողանի օգտին:Ուկրաինայի դեմ պատերազմում անսպասելիորեն մեծ կորուստներ կրելով՝ Ռուսաստանի Դաշնությունը ստիպված է զիջումների գնալ այլ ոլորտներում և իր ազդեցության այլ տարածքներում (Сергей Данилов, Сирийский шантаж Эрдогана: зачем Турция идет на новый конфликт с союзниками):

Անկարայի նախաձեռնողական դիրքորոշման ակտուալացումը նրանից պահանջում է արտաքին քաղաքականության գործիքներն օգտագործելիս իր ուշադրությունը տեղափոխել ազդեցության ոչ միայն «փափուկ» այլև «կոշտ» մեխանիզմների վրա, ինչը պահանջում է տվյալ

պետությունից, ի թիվս այլ պարագաների, ունենալ համապատասխան տնտեսական բազա և ներքին սոցիալ-քաղաքական կոնսենսուս: Ներկայիս իրավիճակը երկրում հստակ ազդարարում է, որ այս երկու գործոններն էլ մասամբ զոհաբերվում են թուրքական իշխող քաղաքական վերնախավի միջազգային հավակնություններին, ինչը մոտեցրել է «կոշտ ուժի» կիրառման սահմանագիծը, երբ դրա ծախսերը զգալիորեն գերազանցում են հնարավոր օգուտները (Денис Миргород, Турция – на пределе «жёсткой» силы): Թուրքիան նախկինում փորձեց դառնալ տարածաշրջանի տնտեսական առաջատարը և որոշակի ժամանակահատվածում զբաղեցրեց այդ տեղը (ԱԶԿ-ի կառավարման 2009-2013 թթ.փուլում): Բայց Էրդողանի կամայական տնտեսական քաղաքականությունը, Արևմուտքի հետ հարաբերությունների վատթարացումը, Թուրքիայի արտաքին առևտրային հաշվեկշռի խաթարումը, նրա միջազգային տնտեսական կապերի քայքայումը և նրա թույլ տված շատ այլ սխալներ զգալիորեն խարխլեցին երկրի տնտեսական հզորությունը, և այժմ այն այլևս մեծ տարածաշրջանի անվիճելի առաջնորդը չէ: Ու թեև նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը անվերջ կրկնում է, որ Թուրքիայի «թշնամիները ցանկանում են վրեժխնդիր լինել 1453 թվականին Ստամբուլի գրավման համար» բայց ինքը վստահ է որ 2023 թվականին Թուրքիայի Հանրապետության 100-ամյակին երկիրը կդառնա աշխարհի ամենազարգացած տնտեսություններից մեկը, երկրի իրական տնտեսական պատկերը այդքան խոստումնալից չէ:

Տարածաշրջանային հեգեմոնի դեր խաղալու փորձերը, ինչպես նաև գլոբալ հավակնությունները գուցե և շոյում են Անկարայի ինքնասիրությունը բայց դրանք հսկայական ծախսեր են պահանջում, ինչը աշխարհի ընդամենը մի քանի երկրներ են կարողանում իրենց թույլ տալ:

Եզրակացություններ: Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտությունը հեռու է ավարտվելուց, և հետևաբար Թուրքիայի «խաղաղապահ» ջանքերը կշարունակվեն, կարելի է փաստել, որ այս դեպքում Անկարան ոչ մի կերպ չեզոք և անաչառ միջնորդ չէ: Ընդհակառակը, օգտվելով երկրի բարենպաստ աշխարհագրական դիրքից՝ Անկարան վարում է երկակի խաղ. Մի կողմից քննադատում է Կրեմլի վարած արտաքին քաղաքականությունը, Ղրիմի բռնակցումը և Ուկրաինայի դեմ շարունակվող ռազմական գործողությունները, մյուս կողմից՝տնտեսական պատժամիջոցներ չի կիրառում Ռուսաստանի հանդեպ և հակառակը՝ փորձում է ստեղծված իրավիճակից տնտեսական և քաղաքական դիվիդենտներ շահել:

Ճկուն դիվանագիտության շնորհիվ Թուրքիային հաջողվում է լինել խորապես ներգրավված և միևնույն ժամանակ՝ հստակորեն հեռու: Ռուսաստանը հանդուրժում է թուրքական զենքի ակտիվ մատակարարումը Կիև, իսկ Ուկրաինան՝ Մոսկվայի հետ Անկարայի լայնածավալ հարաբերությունները: Ռեջեփ Թայիփ Էրդողանը ամենուր ձգտում է օգտվել Ռուսաստանի թույլ կողմերից և մեծացնել իր ազդեցությունը, ավելի ճիշտ, ներկայիս թուրքական իշխանությունների ընկալմամբ՝ «վերադարձնել այն ազդեցությունը, որը Թուրքիան կորցրել է XIX-րդ դարի և XX-րդ դարի սկզբին»: ***Թուրքական աշխարհաքաղաքական վերելքը չափազանց նշանակալի գործոն է առաջին հերթին Ռուսաստանի, բայց նաև տարածաշրջանի մեծ և փոքր այլ երկրների համար:***

Գրականության ցանկ

Հովհաննիսյան Ա. 2014, Թուրքիայի քաղաքականությունը Ղրիմի ճգնաժամի նկատմամբ, Ժամանակակից Եվրասիա, հրատ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, հ.3, No.2, էջ 16-31:

Akpınar P. 2016, An emerging mediator on the periphery: Turkey's mediations in the Syrian-Israeli talks and in Somalia.Doctoral thesis, Keele University.322p. https://eprints.keele.ac.uk/id/eprint/2498/1/AkpinarPhD2016.pdf.

Arlı K. 2014, "Türkiye son 6 yılda Rusya'ya 3 defa mağlup oldu", Zaman, 8 Haziran 2014 http://www.zaman.com.tr/pazar_turkiye-son-6-yilda-rusyaya-3-defamaglup-oldu_2222897.html.

Daniel R., Lindenstrauss G. 2022, Walking a Fine Line: Turkey's Mediation between Russia and Ukraine, and Relations with the West, No. 1586, April 7, 2022 https://www.inss.org.il/publication/turkey-russia-ukraine/

Davutoğlu A. 2013, Turkey's Mediation: Critical Reflections from the Field, Middle East Policy, Vol. XX, No. 1, Spring 2013, pp. 83-90

Eralp D.U. editor, contributor) et al. 2016, Turkey as a Mediator: Stories of Success and Failure, Lanham, Maryland: Lexington Books, 158 p.

Erdogan: Black Sea grain deal result of Türkiye's mediation **2022**, https://www.trtworld.com/turkey/erdogan-black-sea-grain-deal-result-of-t%C3%BCrkiye-s-mediation-63879

Hacıoğlu N. 2014, Ukrayna parçalanırsa, Türkiye'nin Kırım hakkı doğar, Hürriyet: 29 Ocak 2014, http://www.hurriyet.com.tr/dunya/25693129.asp.

Keating J. 2022, How Turkey is turning the war in Ukraine to its own advantage https://www.grid.news/story/global/2022/06/08/how-turkey-is-turning-the-war-in-ukraine-to-its-own-advantage/.

Kiraz S. 2023, 3 SORUDA - 2022'de Türkiye'nin arabulucu rolü https://www.aa.com.tr/tr/analiz/3-soruda-2022de-turkiyenin-arabulucu-rolu/2781143.

Mitchell G. 2015, Turkey: the almost mediator state, Turkish Policy Quarterly, Spring 2015, vol.14, Number 1, pp. 169-177.

Nesuk M., Ksiondzyk N. 1996, Ukraine in Turkish foreign policy, Chapter 6 (pp. 207-218) in Ukrainian Statehood in the Twentieth Century: Historical and Political Analysis. Kyiv: "Political Thought", 1996, 448 p.

Secrieru S., Saari S., Bechev D. 2021, Fire and ice: The Russian-Turkish partnership, Chaillot Paper, No. 168, June 2021, European Union Institute for Security Studies (EUISS), 65 p.

Türkiye dünyaya örnek **2022**, https://www.yenisafak.com/gundem/turkiye-dunyaya-ornek-3894973.

Wilks A. 2022, Turkey hopes to extend mediation role in Ukraine war after grain deal success https://www.al-monitor.com/originals/2022/08/turkey-hopes-extend-mediation-role-ukraine-war-after-grain-deal-success#ixzz7rMEgvy1y.

Yalçın H.B. 2012, The concept of "middle power" and the recent Turkish foreign policy activism, Afro Eurasian Studies, Vol. 1, Issue 1, Spring 2012, pp.195-213, https://dergipark.org.tr/tr/download/article-file/700486.

Арешев А. 2022, Турция как фактор украинского кризиса https://www.fondsk.ru/news/2022/04/07/turcia-kak-faktor-ukrainskogo-krizisa-55932.html.

Белов А. 2022, В вопросе Украины Эрдоган ходит по тонкой грани – POLITICO, 20.08.2022, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=21734.

Блашке С. 2014, Опасный альянс униженных лидеров, https://www.inopressa.ru/article/17dec2014/welt/autokraten.html.

Веселов **А. 2022,** Турция и события на Украине, Интернет-журнал «Военно-политическая аналитика», 18.05.2022 https://vpoanalytics.com/2022/05/18/turtsiya-i-sobytiya-na-ukraine/.

Гостев А. 2022, Игры Эрдогана с Украиной, Россией и войной. Чего хочет Турция, 22 апреля 2022, https://www.svoboda.org/a/igry-erdogana-s-ukrainoi-rossiei-i-voinoi-chego-hochet-turcia/31815185.html.

Данилов С. 2022, Сирийский шантаж Эрдогана: зачем Турция идет на новый конфликт с союзниками https://ghall.com.ua/2022/06/08/sirijskij-shantazh-erdogana-zachem-turtsiya-idet-na-novyj-konflikt-s-soyuznikami/.

Державные амбиции Турции и главный интерес России: война и мир на Кавказе – мнение **2022**, 16 июня https://eadaily.com/ru/news/2022/06/16/derzhavnye-ambicii-turcii-i-glavnyy-interes-rossii-voyna-i-mir-na-kavkaze-mnenie.

Канарова В. 2020, Сравнительный анализ украинско-турецких отношений, Постсоветский материк, 3(27)/2020, с. 33-41.

Канарова В. 2019, Украинско-турецкие отношения в 2014–2019 гг.: динамика, тенденции, перспективы, Постсоветские исследования, т. 2, № 7, с. 1536–1542.

Коноплянко П. 2022, Оценена выгода Турции от зерновой сделки https://www.mk.ru/economics/2022/11/01/ocenena-vygoda-turcii-ot-zernovoy-sdelki.html

Лукьянов Ф. 2022, Естественный медиатор Турция, Россия в глобальной политике, 15.06.2022, https://globalaffairs.ru/articles/estestvennyj-mediator-turcziya/.

Лукьянов: Находившиеся на вторых ролях державы становятся более напористыми https://rg.ru/2020/09/29/lukianov-nahodivshiesia-na-vtoryh-roliah-derzhavy-stanoviatsia-bolee-naporistymi.html.

Македонцев П. 2021, Украина под турецким крылом: исторические причины https://eadaily.com/ru/news/2021/04/22/ukraina-pod-tureckim-krylom-istoricheskie-prichiny.

Миргород Д. 2022, Турция – на пределе «жёсткой» силы, Россия в глобальной политике, 04.04.2022, https://globalaffairs.ru/articles/turcziya-na-predele/.

Россия давит на Турцию там, где может, и чего хочет Эрдоган – Евгения Габер, **UKRLIFE.TV** https://www.youtube.com/watch?v=1i5L4FNNAws.

Тарасов С. 2023, Турцию хотят превратить в «Украину-2», 20.01.2023, https://regnum.ru/news/world/3772512.html.

Турецко-украинские отношения имеют 100-летнюю историю https://www.aa.com.tr/ru/%D1%82%D1%83%D1%80%D1%86%D0%B8%D1%8F/%D1%82%D1%83%D1%80%D0%B5%D1%86%D0%BA%D0%BE-%D1%83%D0%BA%D1%80%D0%B0%D0%B8%D0%BD%D1%81%D0%BA%D0%B8%D0%B5-%D0%BE%D1%82%D0%BD%D0%BE%D1%88%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F-%D0%B8%D0%BC%D0%B5%D1%8E%D1%82-100-%D0%BB%D0%B5%D1%82%D0%BD%D1%8E%D1%8E-%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%D1%80%D0%B8%D1%8E/2152111.